ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ <<Խմբային ուսուցման ազդեցությունը որպես սովորողների ներգրավվածության բարձրացման միջոց>>:

<<Դասերի պլանավորում խմբային աշխատանքի կիրառմամբ>>:

ԱՌԱՐԿԱ՝ տարրական դասարանների ուսուցիչ

ՀԵՂԻՆԱԿ՝ Լիլիթ Միրաբյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝Սիսիանի հ.4 հիմնական դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ Ֆլորա Հովհաննիսյան

2023

Բովանդակություն

Ներածություն----------3

Գրականության տեսություն----------4

Հետազոտության ընթացք----------8

Վերլուծություն----------20

Եզրակացություն----------23

Գրականության ցանկ----------24

Ներածություն

Կրթության արդյունավետության գլխավոր կարգախոսը սովորողների ներգրավվածությունն է:Այս խնդիրը կարևորում եմ նաև ես,քանի որ առանց սովորողների ակտիվ ներգրավվածության արդյունավետ ուսուցում լինել չի կարող:Իմ նպատակը եղել է հետևյալը՝ուսումնասիրել խմբային ուսուցման ձևերի ազդեցությունը սովորողների ներգրավվածության բարձրացման վրա:Քանի որ ուսուցումը դարձել է աշակերտակենտրոն,մենք ունենք խնդիր՝օգնելու սովորողներին պասիվ լսողից դառնալ ակտիվ ուսումնասիրող,բացահայտող,վերլուծող աշակերտ,իսկ դա հնարավոր կլինի,եթե սովորողը ակտիվորեն ներգրավված է ուսումնական պրոցեսում:

Այս խնդիրը միշտ էլ կա դասարանում,քանի որ սովորողները տարբերվում են իրենց ուսումնառության ոճերով,մշակույթով,ունեցած նախնական գիտելիքներով:Հետևաբար ուսուցիչը պետք է կարողանա խթանել նրանց հետաքրքրվածությունը ընդգրկի դասապրոցեսում,նպաստի սովորողի մտքերի ազատ արտահայտմանը,ստեղծագործականության զարգացմանը:Դրա համար ուսուցիչը պետք է տիրապետի մի շարք ռազմավարությունների և կարևորի դրանց ունեցած ազդեցությունը:

Մանկավարժության մեջ կան տարբեր մեթոդներ,որոնք խթանում են ներգրավվածությունը:Իմ մտադրությունն է կիրառել դասապրոցեսում ուսուցման տարբեր խմբային մեթոդներ և հետազոտել,թե տվյալ մեթոդները ինչպես են ազդում սովորողների ակտիվության բարձրացման վրա:

Խմբային մեթոդները կիրառելիս ակնկալել եմ,որ սովորողները խմբում աշխատելիս ավելի ազատ են իրենց զգում մտքեր փոխանակելիս,կարծիքներ քննարկելիս,իրար սովորեցնում են,դառնում են ավելի պարտաճանաչ,փոխադարձ ստուգում են իրար և այլ քայեր,որոնք,բնականաբար,բարձրացնում են սովորողների ներգրավվածությունը ուսուցման գործընթացում:Ահա այդ պատճառով ընտրել եմ այս մեթոդների ազդեցության ուսումնասիրումը՝որպես հետազոտական աշխատանք:Ակնկալում եմ ակտիվության զգալի աճ պասիվ սովորողների մոտ,նաև ներգրավվածության որակյալ փոփոխություն:

Գրականության տեսություն

Խմբային ուսուցման ազդեցությունը որպես սովորողների ներգրավվածության բարձրացման միջոց

Խմբային աշխատանքի նպատակը

Խմբային աշխատանքի նպատակը ուսումնական նյութի յուրացման գործընթացում յուրաքնչյուր սովորողի ակտիվ ներգրավվածության ապահովումն է:

Խմբային աշխատանքի խնդիրները

- Ճանաչողական գործունեության ակտիվացում.
- Ինքնուրույն ուսումնական գործունեության հմտությունների զարգացում առաջատար և միջանկյալ առաջադրանքների սահմանում, արդյունավետ ուղու ընտրություն, սեփական ընտրության հետևանքները կանխատեսելու, այն օբյեկտիվորեն գնահատելու կարողություն.
- Հաղորդակցման հմտությունների զարգացում/ իրար լսելու, երկխոսություն կառուցելու, հասկանալու համար հարցեր տալու և այլն/.
- Դասարանում միջանձնային հարաբերությունների բարելավում:
-

Խմբային աշխատանքի սկզբունքները

- Հաշվի առնել սովորողների կրթական հնարավորությունների մակարդակը
- Հաշվի առնել խմբի կազմի առանձնահատկությունները.
- Կազմել առաջադրանքներ համատեղ աշխատանքի համար, որոնց կատարումը սահմանափակ ժամանակում հնարավոր է միայն խմբով.
- Դերերի բաշխում խմբի անդամների միջև.
- Կազմակերպել հաղորդակցություն խմբի ներսում և խմբերի միջև.
- Ուսումնական գործունեության արտացոլումը պետք է լինի խմբային աշխատանքի արդյունքը:

Խմբերի ձևավորման տարբերակներ

1. **Ըստ ցանկության**

Խմբերի բաժանումը տեղի է ունենում փոխադարձ ընտրությամբ:

Խմբի ձևավորման առաջադրանքը ,ըստ ցանկության, կարող է տրվել առնվազն երկու տարբերակով.

- Բաժանել…. Հոգանոց խմբերի:
- Բաժանել …. Հավասար խմբերի:

2.Պատակահանության սկզբունքով

Պատակահանության սկզբունքով ձևավորված խմբում կարող են միավորվել այն երեխաները, որոնք այլ պայմաններում չեն շփվում միմյանց հետ կամ նույնիսկ վիճում են: ՈՒ սուցիչը պետք է միջանձնային կոնֆլիկտները կառավարելու բավարար կոմպետենցիա ունենա: Նման խմբում աշխատելով մասնակիցները ձեռք են բերում տարբեր պայմաններում գործելու և գործընկերներին հարմարվելու ունակություն:
Խմբի ձևավորման այս մեթոդը օգտակար է, երբ ուսուցչի նպատակն է երեխաներին սովորեցնել համագործակցել:

Պատահական խմբի ձևավորման եղանակները.

Վիճակահանություն

Կողք կողքի նստածների համախմբում/ նույն շարքում, դասարանի նույն կեսում/ Իմպրովիզացված ֆանտերի կիրառմամբ/ սովորողներից մեկը փակ աչքերով ասում է այն խմբի համարը, ուր տեղափոխվելու է ուսուցչի կողմից ընտրված աշակերտը և այլն/:

3.Որոշակի հատկանիշի հիման վրա.

Նման հատկանիշը որոշում է կամ ուսուցիչը կամ աշակերտներից մեկը:
Այսպիսով ,կարելի է բաժանել անվան առաջին տառով/ ձայնավոր, բաղաձայն/, տարվա որ ժամանակին է ծնվել/ չորս խմբի/ այլն:

4.Առաջնորդի ընտրությամբ.

Առաջնորդը այս դեպքում կարող է նշանակվել ուսուցչի կողմից/ ելնելով նպատակից, ցանկացած աշակերտ կարող է հանդես գալ որպես առաջնորդ/ կամ ընտրվել երեխաների կողմից: Խմբերի ձևավորումը իրականացնում են հենց իրենք առաջնորդները, նրանք հերթով տալիս են այն անունները, որոնց հետ կցանկանային աշխատել խմբով:

5.ՈՒսուցչի ընտրությամբ.

Այս դեպքում ուսուցիչը խմբեր է ստեղծում նպատակից բխող ինչ-որ կարևոր հատկանիշով, դրանով իսկ լուծելով մանկավարժական որոշակի խնդիրներ: Նա կարող է համախմբել նմանատիպ ինտելեկտուալ կարողություններով միանման աշխատողներին կամ ստեղծել խառը կազմով թիմեր: Խմբային աշխատանքի կազմակերպիչը կարող է բացատրել միավորման սկզբունքը:

ՈՒսուցչի դերը խմբային աշխատանքի ընթացքում

Փոքր խմբերում աշխատող ուսուցիչը կարող է տարբեր կերպ վարվել: Նա կարող է.

- Հսկել .
- Կազմակերպել.
- Գնահատել աժակերտների աշխատանքը.
- Մասնակցել խմբի աշխատանքներին.
- Առաջարկել մասնակիցներին տարբեր լուծումներ.
- Գործել որպես դաստիարակ, հետազոտող կամ տեղեկատվության աղբյուր:

Արդյունավետ խմբային աշխատանք կազմակերպելիս ուսուցիչը պետք է խուսափի.

- Նստել գրասեղանի մոտ և ստուգել տետրերը.
- Խմբային աշխատանքը դիտարկել որպես դադար և դուրս գալ սենյակից.
- Ամբողջ ուշադրությունը նվիրել մեկ խմբի մոռանալով մնացածի մասին.

- Ուղղել սխալները/ բացառությամբ այն դեպքերի, երբ աշակերտներն իրենք են խնդրում.
- Ճնշում գործադրել մասնակիցների վրա
- Ուղղել կամ քննադատել աշխատանքները, նույնիսկ եթե դրանք պարունակում են կոպիտ սխալներ.
- Չափազանց կոպիտ գնահատականներ տալ. Դրանք ճնշող ազդեցություն են ունենում մասնակիցների վրա.
- Պատասխանել հարցին աշակերտների փոխարեն.
- Շրջել դասարանով կամ կանգնել աշակերտների մոտ խմբային աշխատանքի սկզբում. Սովորողները հաճախ ամաչում են խոսել ուսուցչի ներկայությամբ: Քննարկման ավարտին, երբ մասնակիցներն սկսել են խոսել, ուսուցիչը կարող է նաև ներգավվել աշխատանքի մեջ, լսել, թե ինչպես է ընթանում քննարկումը խմբերով, ուղղորդել և աջակցել մասնակիցներին, պատասխանել հարցերին:

Առաջադրանքների ընտության սկզբունքները

Առաջադրանքները պետք է ուղղված լինեն խմբի բոլոր անդամների ընկերական և համակարգված աշխատանքին և նկատելիորեն ավելի լավ արդյուք ունենա, քան անհատական աշխատանքի դեպքում:
Նպատակահարմար է օգտագործել.
- Առաջադրանքներ, որոնք պահանջում են մեծ ծավալի աշխատանք.
- Առաջադրանքներ, որոնք պահանջում են տարատեսակ գիտելիքներ և հմտություններ, որոնց տիրապետում են խմբի ամդամները որպես ամբողջություն, այլ չի պատկանում երեխաներից որևէ մեկին անհատապես.
- Ստեղծագործական մտածողության զարգացման առաջադրանքներ, որտեղ պահանջվում է առավելագույն թվով հետաքրքիր գաղափարներ առաջարկել.
- Առաջադրանքներ, որոնք պահանջում են խմբի հաջորդ քայլերը ապահովող որոշումներ:

Աշխատանքի բովանդակությունը պետք է հետաքրքիր և մատչելի լինի երեխաների համար: Առաջադրանքները պետք է լինեն խնդրահարույց, ստեղծեն

որոշակի ճանաչողական դժվարություն, հնարավորություն ստեղծեն ստացած գիտելիքների ակտիվ կիրառման համար:

Մի քանի խորհուրդ ուսուցչին խմբային աշխատանք կազմակերպելիս

- Երեխաներին չի կարելի պարտադրել միասին աշխատել, եթե չեն ցանկանում
- Աշակերտին, որը ցանկանում է միայնակ աշխատել, թույլ տալ նստել առանձին.
- Խմբային աշխատանքը առաջին, երկրորդ դասարաններում պետք է տևի 15-20 րոպե, երրորդից չորրորդ դասարաններում 20-30 րոպե.
- Դասարանում չի կարելի պահանջել բացարձակ լռություն, երեխաները պետք է մտքեր փոխանակեն համատեղ աշխատանքի արդյունքը ներկայացնելուց առաջ: Դասարանում կարող է գործել պայմնական ազդանշան, որը ցույց կտա թույլատրելի աղմուկի մակարդակի գերազանցումը.
- Երեխաները չպետք է պատժվեն զրկվելով համատեղ աշխատանքին մասնակցելու իրավունքից:

Խմբային աշխատանքում արագ արդյունքներ սպասել պետք չէ, քանի դեռ չեն մշակվել հաղորդակցության ամենապարզ ձևերը: Ժամանակ է պահանջվում, հարկավոր է ձեռք բերել խմբային աշխատանքների փորձառություն: Այն ուսուցչից պահանջում է համբերություն և հետևողական աշխատանք:

Հետազոտության ընթացքը

Ինչպես արդեն նշել էի գործնական համատեքստում,խմբային ուսուցման ռազմավարությունը որոշել եմ կիրառել դասի տարբեր փուլերում,ուսումնասիրելու համար,թե երբ է այն ապահովում ներգրավվածության բարձրացում:

Փորձարարական դաս 1

Դասարանը՝ 1- ին

Առարկան՝Մայրենի/Այբբենարան/

Դասի թեման՝ <<Ժ>>հնչյուն-տառի ուսուցում

Դասի բնույթը՝ նոր նյութի հաղորդման դաս

Դասի նպատակը

Սովորեցնել *<<Ժ>>հնչյուն-տառի արտասանությունը և գրությունը, ստեղծել պատմություն նկարի շուրջ, սահուն կարդալ բնագիրը:*

Զարգացնել *բանավոր խոսքը, լեզվական նախագիտելիքներ, խմբում համագործակցելու կարողություններ:*

Դաստիարակել *գեղագիտական ճաշակ:*

Դասի վերջնարդյունքները՝

Կարտասանեն նոր հնչյունը

Կգրեն նոր տառը

Բառից կառանձնացնեն ուսուցանվող նոր հնչյունը և կօգտագործեն բառասկզբում,բառամիջում,բառավերջում,տարբեր հնչյունների հետ ունեցած վանկային կապակցություններում,բաց և փակ վանկերում:

Խաչվող հասկացություններ՝ Զարգացում

Դասի կահավորումը՝ մեծադիր, փոքրադիր, նկարազարդ, ձեռագիր, տպագիրտառեր, քարտեր՝ խմբային առաջադրանքների կատարման համար, անակնկալների պարկ կամ տուփ, մեծադիր ժամացույց:

Դասի ընթացքը

1.Անցածի ամփոփում

2.Նոր նյութի հաղորդում

3.Ֆիզկուլտդադար

4.Աշխատանք այբբենարանով

5.Մատիկների վարժանք

6.Խմբային աշխատանք

7.Դասի ամփոփում և խրախուսում

8.Տնային հանձնարարություն

Ընթացքի նկարագրությունը

Աշակերտները նախապես բաժանված են խմբերի: Նոր նյութի հաղորդումից հետո խմբերը ստանումեն իրենց անվանումները:

1.Անցածի ամփոփում

<<Պոպ-կորն>>հնարի միջոցով ամփոփում ենք անցած ձայնավոր և բաղաձայն հնչյունները, գտնում դրանց արտասանության տարբերությունները, ձևակերպում ենք նախադասության սահմանումը, կազմում օրինակներ: Այնուհետև անցկացնում ենք փոքրիկ մրցույթ խմբերի միջև՝ ով արագ և ճիշտ կասի նախորդ դասի շուտ ասելուկը.

Ցոլակը ցատկեց ցից ցանկապատից,

Ցանկապատը ցնցվեց Ցոլակի ցատկից:

2.Նոր նյութի հաղորդում

Նոր նյութի հաղորդման համար անակնկալների տուփից հանում ենք մի փոքրիկ պատմվածք և սկսում նախապատրաստական զրույցը.

-Երեխանե՛ր, այժմ ես կկարդամ մի փոքրիկ պատմություն: Ուշադիր լսե՛ք, որպեսզի կարողանաք պատասխանել հարցերին և վերապատմել.<<Ժաննան Ժիրայրի քույրիկն է: Նա շատ ժպտերես, ժրաջան, ժիր աղջիկ է: Մի անգամ նա կորցնում է իր ժապավենը և շատ տխրում: Ժիրայրն իր ընկերների հետ գտնում է այն>>:

Այնուհետև աշակերտները պատասխանում են հարցերին.

1.Ո՞ւմ քույրիկն էր Ժաննան:

2.Ինչպիսի՞ աղջիկ էր նա:

3.Ի՞նչը կորցրեց նա:

4.Ովքե՞ր գտան ժապավենը:

Հարցերի պատասխանը լսելուց հետո աշակերտներից մեկը վերապատմում է պատմությունը և պատմվածքից առանձնացնում են <<ժ>> հնչյուն-տառով սկսվող մեկնաբառերը: Որոշում են նաև խմբերի անվանումները, որոնք նույնպես սկսվում են ժ-ով՝

Ժպտերեսիկներ

Ժամապահիկներ

Ժրաջաններ

Այնուհետև աշակերտներին առաջարկվում է հանելուկ, որի պատասխանը նորից ժ-ով է և գտնվում է անակնկալների տուփում:

3. Ֆիզկուլտդադար

4.Աշխատանք այբբենարանով

Աշակերտների օգնությամբ վերապատմում են թեմատիկ նկարը. <<Նկարում երևում է Հանրապետության հրապարակը, որտեղ շրջում են զբոսաշրջիկները: Բոլորն ուրախեն, գոհ, ժպտերես: Շենքին ամրացված է մեծ ժամացույց, բայց Ժիրայրը նայում է իր ձեռքի ժամացույցին: Նա կարծես ուշանում է երաժշտական պարապմունքից>>:

Նկար-*պատմությունից առանձնացնում են Ժիրայր, ժամացույց, ժպտերես, ժիր, երաժշտություն բառերը:*

Ժամացույց բառը ենթարկում են հնչյունային վերլուծության:

Այնուհետև ցույց է տրվում ժ-ի գրելաձևը և աշակերտները գրում են օդում , մի քանի օրինակ էլ՝<<Գրատետր-2>>-ում:

Միասին արտասանում են ժ-ի երկտողը.

Պտույտներով սլաքներիս

Ժամանակն եմձեզ ցույց տալիս:

Պարզում են ,թե ո՞վ գիտի օգտվել ժամացույցից:

Կարդում են բառաշարքերը, բացատրում, կրկնում և անցնում բնագրին:

Այնուհետև բացատրվում է՝

Ժիրայր-կայտառ, աշխույժ տղամարդ, նույնը կատարվում է ժամացույց բառի հետ:

Վերջում տրված բառակապակցություններով աշակերտները կազմում են նախադասություններ:

5.Մատիկների վարժանք

6.Խմբային աշխատանք

Խմբային աշխատանքի համար խմբերին բաժանվում են քարտեր, որոնց վրա գրված են առաջադրանքները.

1.Խառնագիր-երբ խառնվել են բառի տառերը և պետք է վերականգնելբառը.

նտե- _____

վկատ- _____

տրաօ- _____

կկիշո- _____

երտ- _____

2.Աջ ու ձախ- պետք է տառը դնել բառի սկզբում կամ վերջում այնպես, որստացվի բառ.

ա

<u>__շուն__</u>

<u>__մպ__</u>

<u>կրի__</u>

<u>օպեր__</u>

<u>ման__</u>

3.Վանկախաղ-տրված վանկերով պետք է կազմելբառեր.



Առաջադրանքի կատարման ժամանակ հետևել խմբերի աշխատանքին և խրախուսել առաջինն ավարտող խմբին: Հերթականությամբ քննարկել մնացածխմբերի աշխատանքները:

<u>7.Դասի ամփոփում և խրախուսում</u>

Ամփոփում ենք դասը՝ ո՞ր հնչյուն-տառը սովորեցինք, ինչպե՞ս է արտասանվում, ձայնավո՞ր է, թե՞բաղաձայն:

Ակտիվ աշակերտներին խրախուսել աստղիկներով, հաշվի առնելով խմբային աշխատանքին նրանց մասնակցությունը:

8.Տնային հանձնարարություն

Վերապատմել նկար- պատմությունը, սահուն կարդալ բնագիրը, <<Գրատետր-2>>-ի համապատասխան վարժություններից մի քանի օրինակ:

Փորձարարական դաս 2

Առարկա՝ Մայրենի

Դասարան ՝ 2-րդ

Դասի թեման՝ Երևան

Դասի տիպը՝ Գիտելիքների ամրապնդման,կարողությունների,հմտությունների ձևավորման դաս

Դասի նպատակները՝

Գիտելիք

- Ընդլայնել հայրենիքի և շրջապատող աշխարհի մասին գիտելիքները
- Հարստացնել բառապաշարը
- Զարգացնել որոշ պատկերացումներ հայ ժողովրդի պատմության,մշակույթի վերաբերյալ

Կարողություն

- Ձևավորել անսովոր իրավիճակներում և առաջադրանքներում կողմնորոշվելու և ոչ ստանդարտ լուծումներ տալու կարողություններ
- Ձևավորել հարցեր տալու կարողություն
- Զարգացնել դերերով կարդալու կարողությունը

• Ձևավորել ժամանակի և տարածության մեջ կատարված փոփոխությունները տեսնելու և գնահատելու կարողություններ

Դասի վերջնարդյունքները՝

• Դերերով կընթերցեն տեքստը՝ համապատասխան արտահայտչական միջոցներով և հույզերով

• Կսովորեն «Աչքի առաջ» բառերը՝ օգտագործելով բառակապակցությունների և նախադասությունների մեջ

• Կսովորեն հարցեր տալ, ձևակերպի հարցեր առաջադրված պատասխանների համար

• Կճանաչեն Երևանի դրոշը, զինանշանը, օրհներգը

• Կամրապնդեն է-ե ուղղագրության իմացությունը

• Կգնահատեն դասի ընթացքում իրենց ձեռքբերումները

Միջառարկայական կապերը `

• Կերպարվեստ (Երևանի տեսարժան վայրերի նկարներ)

• Երաժշտություն («Երևանի օրհներգի» ունկնդրում)

Դասի ընթացքը՝

1. Ներածություն (3-5 րոպե) Դասի սկզբում, երբ ուսուցիչը ցանկանում է հասկանալ, թե ինչ են յուրացրել սովորողները նախորդ դասից, կիրառվում է անհատական «Մուտքի քարտեր» հնարը.

- Նշի՛ր 3 բան, որ հիշում ես նախորդ դասից:
- Նշի՛ր 2 բան, որ կարևորում ես:
- Նշի՛ր 1 բան, որին կուզենայիր այս դասին կրկին անդրադառնալ:

2. Հիմնական մաս (23-25 րոպե) `

Դերերով ընթերցանություն՝ կարդալու որակական հատկանիշները զարգացնելու նպատակով.

Ուսուցչի առաջարկով աշակերտներն ընտրում են դերերը՝ 186 Արամ պապ, Արգիշտի թոռ: Կարդում են տեքստը դերերով՝ պահպանելով կետադրական նշանները: Կարդում են այնպես, որ զգացվեն Արգիշտիի անկեղծ զարմանքն ու Արամ պապի սերը Երևանի նկատմամբ:

Աշխատանք «Աչքի առաջ» բառերի շուրջ.

Աշակերտները «Աչքի առաջ» խորագրի բառերը գրում են գրատախտակին՝բաց

թողնելով ուղղագրական արժեք ներկայացնող տառերը, օրինակ՝ Եր-ան, թա-ավոր, ա-տոմեքենա, կարա-, բար-ել, կա-ք: Աշակերտները տարբերվող որևէ գույնով լրացնում են բաց թողած տառերը, գրում են այդ բառերը գրատախտակին և բառատետրում, կազմում բառակապակցություններ կամ նախադասություններ: Երևան- վարդագույն Երևան, Երևանի հուշարձաններ թագավոր- հզոր թագավոր, թագավորի զգեստ բարձել- բեռները բարձել, բարձել ավտոմեքենան ավտոմեքենա- մարդատար ավտոմեքենա, ավտոմեքենայի ղեկ կառք- արագընթաց կառք, կառք նստել, ձիերը լծել կառքին կարագ- դեղին կարագ, կարագը հալել, կարագով ճաշ եփել

Աշխատանք տեքստային և լեզվական առաջադրանքների շուրջ. Առաջադրանք 3. Տեքստից օգտվելով՝ լրացրո՛ւ նախադասություններում բաց թողած բառերը: Ուսուցիչը աշակերտներին հնարավորություն է տալիս մեկ անգամ ևս հետահայաց վերլուծություն կատարելու, հիշելու դասի ընթացքում կատարված աշխատանքները, յուրացրած նյութը և լրացնելու անավարտ նախադասությունները: Էրեբունին, հազարավոր տարիներ բերնեբերան անցնելով, դարձել է Երևան: Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է: Երևանում բոլորը խոսում են հայերեն, ծիծաղում են հայերեն, սիրում ու ապրում են հայերեն: Առաջադրանքը նպաստում է տեքստի բովանդակության յուրացմանը, ինչպես նաև այն բանին, որ աշակերտը մտապահի, հիշողության մեջ ամրագրի, որ Երևան անունը առաջացել է Էրեբունի անունից, որ Երևանը Հայաստանի 187 մայրաքաղաքն է, որտեղ բոլորը խոսում են հայերեն, ծիծաղում են հայերեն, սիրում ու ապրում են հայերեն:

Առաջադրանք 4. Արտագրի՛ր բանաստեղծությունը: Լրացրո՛ւ աղյուսակը:

ԷՐԵԲՈՒՆԻ

– Էմի՛ն, գնա՞նք Էրեբունի:

– Գնա՞նք, Արա:

Բայց չգիտեմ տեղը նրա:

– Ա՜յ քեզ Էմին, դու չգիտե՞ս,

Որ հնամյա Էրեբունին

Երևանի անունն է հին:

Առաջադրանք 5. ՍՈՎՈՐԻ՛Ր ՀԱՐՑԵՐ ՏԱԼ

• Կարդա՛ պապիկի պատասխանները: Մտածի՛ր, թե ինչ հարցեր է տվել Արգիշտին:

• Լրացրո՛ւ աղյուսակը: Քեզ օգնության կգան ընդգծված բառերը:

Արգիշտին կարող էր տալ այսպիսի հարցեր.

Ո՞րն է Հայաստանի մայրաքաղաքը:	Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է:
Ո՞վ է կառուցել Էրեբունին:	Էրեբունին կառուցել է հզոր թագավոր Արգիշտին:
Որտե՞ղ է պահվում Երևանի քարե անձնագիրը:	Երևանի քարե անձնագիրը պահվում է Էրեբունի թանգարանում:
Ի՞նչ քարերով են կառուցված Երևանի շենքերը:	Երևանի շենքերը կառուցված են վարդագույն տուֆից:

Դասարանը բաժանել խմբերի : Յուրաքանչյուր խմբին տալ թղթե շերտիկների վրա գրված պատասխան-նախադասությունները: Աշակերտները լուռ կարդում են նախադասությունը, մտածում են հարցը և գրում շերտիկի վրա: Աշխատանքն ավարտելուց հետո խմբերը ներկայացնում են իրենց գրած հարցերը: Աշակերտները նույն պատասխանի համար ձևակերպում են տարբեր հարցեր: Ուսուցիչը ուշադիր լսում է, հնարավորության տալիս արտահայտվելու բոլոր խմբերին, ապա միայն, քննարկելով աշակերտների հետ, կատարում ճշգրտումներ:

Դասի ամփոփում և անդրադարձ (10 րոպե)

«Կմախք» մեթոդ:

Գրել 1 նախադասություն, որը կասի, թե ինչի մասին է պատմվածքը.

1 արտահայտություն, որ կարևոր է տեքստի համար

1 բառ, որ արտահայտում է պատմվածքի իմաստը

Ի՞նչ գույն ունի պատմվածքը

Գնահատում

Ձևավորող գնահատման «Ելքի քարտեր» հնարի միջոցով դասի ավարտին հավաքվում են սովորողների պատասխանները: Հիմնվելով պատասխանների վրա՝ ուսուցիչը կառուցում է հաջորդ դասը, որպեսզի առանձնացնի և անդրադառնա չյուրացված հասկացություններին, գաղափարներին:

Նշիր 3 բան, որ սովորեցիր այսօր:

Նշի՛ր 2 բան, որ հետաքրքրեց քեզ:

Նշի՛ր 1 բան, որ մնաց անհասկանալի:

. **Տնային աշխատանք**. Պատմե՛լ՝ ինչպես է Էրեբունին դարձել Երևան: Արտագրել դուր եկած հատվածը:

Այս փուլում վկայություններ չէի հավաքում,բայց

Հետազոտական դաս 3

Դասարան՝4-րդ

Դասի թեման՝ Յոթ սարից,յոթ ձորից այն կողմ

Մուտքի զրույց:Ամենաթանկը հավասարների մեջ:

Նախադասության տեսակներն ըստ հնչերանգի

Դասի նպատակները՝

Զարգացնել երկխոսությունները,հասկանալով,արտահայտիչ կարդալու կարողությունները

Ամրապնդել նախադասության մասին ունեցած գիտելիքները

Վերջնարդյունքները՝

Կկարողանան կարծիքներ և տպավորություններ արտահայտել բնագրի շուրջ

Կկազմեն գաղափար նրանց՝ըստ հաղորդակցման ,տեսակի մասին

Զրույցի միջոցով վեր կհանեն հեքիաթի մասին ունեցած գիտելիքները

Խաչվող հասկացություններ՝պատճառ և հետևանք,ժամանակ և տարածություն:

Միջառարկայական կապեր՝ ես և շրջակա աշխարհը,կերպարվեստ

Դասը անցկացվում է ԽԻԿ համակարգով:

Դասի ընթացքը-Խթանման փուլ

Նոր ուսուցանվող թեման չի ասվում անմիջապես:Աշակերտները պետք է խաղի միջոցով կռահեն թաքնված բառը:Այդ բառի տառերը կռահելու համար առաջադրվում են հետևյալ հարցերը:

1.-Հեքիաթի որ հերոսն է անբան,ծույլ,ամբողջ օրը նստած մաստակ է ծամում:

-Հուռին:

2.Այն ի՞նչն է,որ քնած ժամանակ ենք տեսնում

-Երազ:

3.Անհաղթ հերոս,որ մին զարկում է,ջարդում է հազար:

-Քաջ Նազար:

4.-Վինի Թուխի ընկեր իշուկի անունը:

-Իա:

5.-Անդերսենի հեքիաթի հերոսներից,ով մեծանում և դառնում էգեղեցիկ կարապ:

-Անճոռնի ճուտիկը :

6.-Սպիտակաձյունիկի յոթ ընկերները:

-Թզուկներ:

Պատասխանների տառերը տեղադրելով ստանում են հեքիաթ բառը:Կատարվում է մտագրոհի մեթոդը,պետք է թվել այն ամենը,ինչ զգում են հեքիաթ բառն ասելիս:



Ուշադրություն հրավիրել հեքիաթների մուտքին,ի՞նչ բառերով են սկսվում հեքիաթները:Քանի՞ տեսակ հեքիաթներ են լինում. իրապատում ,հրաշապատում,կենդանական:

Իմաստի ընկալում-Դասագրքի նկարում ո՞ր հեքիաթներից են պատկերված:Ասել,որ այս հեքիաթների հերոսներից նամակներ ենք ստացել:Բացել ծրարները և կարդալ առաջին նամակը:

<<Բարև ձեզ,սիրելի երեխաներ:Ես թագավոր եմ և իմ երկրին կառավարիչ եմ փնտրում:Ես առաջարկում եմ լուծել մի հանելուկ:Ով ճիշտ կպատասխանի,նա էլ կդառնա կառավարիչ>>:

Առաջարկվում է կարդալ հայկական<<Ամենաթանկը հավասարների մեջ>>հեքիաթը:

Աշակերտները մեկ անգամ լուռ ընթերցում են:Երկրորդ անգամ ընթերցում են իրար շարունակելով:Ընթերցելուց հետոպատասխանում են բնագրի հարցերին:

Բառային աշխատանք-թագավոր,հեեքիաթ,առաջին,երկրորդ,երրորդ բառերի ուղղագրությունը բացատրել և դրանցով կազմել նախադասություններ:

Կշռադատում-Ի՞նչ սովորեցրեց հեքիաթը:

Դասարանը բաժանել 3 խմբի:

Առաջին խումբը գրում է անվանակապ Հեքիաթ բառով:

Հերոսներով հարուստ ես,

Երեխաները սիրում են քեզ:

Քնելիս ես հայտնվում,

Իրական ես,իմաստուն:

Ապրում ես մեր մտքերում,

Թևեր տալիս մեր հոգուն:

Երկրորդ խումբը գրում է կենսագրական բանաստեղծություն:

Ես-Հեքիաթ

Բնավորությունս-բարի,աշխատասեր

Սիրում եմ-երբ ինձ կարդում են

Ազգականներս-առակ,պատմվածք,բանաստեղծություն

Ձգում եմ- ջերմություն

Կարիք ունեմ-ընթերցասեր երեխաների

Վախենում եմ-չար հերոսներից

Տալիս եմ-գիտելիք

Ուզում եմ –ինձնից սովորեն

Բնակվում եմ-գրքերում

Ազգանունս-Հեքիաթիկյան

Երրորդ խումբ-հորինել հեքիաթ<< Լռությունը ոսկի է >>վերնագրով:

Տնային առաջադրանք-Բնագիրը արտահայտիչ ընթերցել,գրել առաջադրանք 1-ը:

Վերլուծություն

Ողջ ուսումնասիրության ընթացքում,որը իրականացրել եմ,գլխավոր նպատակս է եղել ուսումնասիրել՝ արդյոք խմբային մեթոդները կարող են բարձրացնել սովորողների ներգրավվածությունը դասապրոցեսում:Դրան զուգահեռ նաև ցանկացել եմ պարզել,թե հատկապես դասի որ փուլում է խմբային ուսուցումը ավելի արդյունավետ:Միաժամանակ կիրառել եմ տարբեր մեթոդներ,որպեսզի խմբերում աշխատանքը լինի ավելի հետաքրքիր,և ուսուցումը՝ավելի

արդյունավետ:Ուսումնասիրությունը կատարել եմ՝ընթացքում փոփոխելով հետևյալ կետերը.

1.խմբային աշխատանքին հատկացվող ժամանակը

2.խմբում կատարվող աշխատանքը հիմնվում է տանը սովորած նյութի անմիջական քննարկման վրա,թե նյութը միասին են սովորում,ապա քննարկում

3.խմբի աշխատանքին ինչն է հաջորդելու.աշխատանքը ներկայացվելու է ամբողջ խմբի կողմից,թե դրան հետևելու են սովորողներին տրվող անհատական առաջադրանքներ:

Այսպիսով՝ամփոփելով հետազոտական աշխատանքը՝կատարել եմ հետևյալ եզրահանգումները.

1.Խմբային ուսուցման մեթոդները մեծացնում են սովորողների ներգրավվածությունը:

2.Ներգրավվածության բարձրացումը դրականորեն է ազդում սովորողի ուսումնառության վրա:

3.Խմբային ուսուցմամբ կատարված աշխատանքը պետք է ներկայացվի,կամ ձեռք բերված գիտելիքը պետք է կիրառվի ,որպեսզի ստեղծվի պատասխանատվություն և մոտիվացիա:

4.Խմբային ուսուցմանը պետք է հատկացնել նվազագույնը 15 րոպե:

5.Խմբային ուսուցման ժամանակ ցանկալի է կիրառելտարբեր մեթոդներ,որպեսզի աշխատանքը ձանձրալի չդառնա:

Ստորև ներկայացնում եմ փորձարարական դասերից ստացված արդյունքները դիագրամների միջոցով.







Կապույտ՝ ակտիվ մասնակիցներ

Կարմիր՝ոչ շատ ակտիվ

Դեղին՝պասիվ

Մոխրագույն՝չմասնակցած

Եզրակացություն

Իմ ուսումնառության նպատակն էր պարզել՝կիրառելով խմբային ուսուցման տարբեր մեթոդներ. կարելի՞ է բարձրացնել սովորողների ներգրավվածությունը դասապրոցեսում:

Խմբային աշխատանքը նպաստում է ստեղծագործական իրադրության ապահովմանը, մտավոր նախավարժանքի, մտածելու և մտքերի ազատ փոխանակման մթնոլորտի ստեղծմանը, բացատրական ընթերցանության ճիշտ օգտագործմանը, հետազոտական և ստեղծագործական կարողությունների զարգացմանը և, ի վերջո, սեփական հնարավորությունների ճանաչմանը:Աշակերտների մեջ ձևավորվելու են տեսակներն ու մտքերը հստակ արտահայտելու, իրավիճակը վերլուծելու կարողություններ, ճիշտ համագործակցելու, սովորելու, սովորեցնելու, հանդուրժելու, լսելու և այլ անձնային հատկանիշներ:

Աշակերտները փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, թեմա հետազոտելու կամ նոր մտահղացում իրականացնելու ուղղությամբ: Այս մեթոդը նպաստում է, որ երեխաները սովորեն իրարից, սովորեցնեն միմյանց, արդյունավետորեն համագործակցեն և դրսևորեն ստեղծագործական մոտեցումներ: Այս կերպ նրանք ձեռք են բերում ամբողջ շրջապատն ընկալելու ունակություն, ստեղծագործական գործընթացի մեջ ունենում են անհատական ներդրումներ:

Հիմնվելով հետազոտական աշխատանքի ողջ ընթացքում հավաքագրած տվյալների ու դրանց վերլուծությունների վրա՝եկա դրական եզրակացության.դա արդյունավետ ուսուցման մեթոդ էր:Իհարկե,դա միակ ազդեցությունը չէ ներգրավվածության բարձրացման,բայց սա ևս մեծ ազդեցություն թողնող ռազմավարություն է,պարզապես պետք է ճիշտ կիրառել՝դասի նպատակներից ելնելով,ու զուգակցել այլ ռազմավարությունների հետ:Կարծում եմ՝սա ինձ համար կլինի կարևոր ռազմավարություն այսուհետ դասավանդման ժամանակ կիրառելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1.Քննադատական մտածողության զարգացումը կրտսեր դպրոցում:

Ծրագրեր և նյութեր ,Երևան 2002:

2.Ջինի Լ.Աթիլ,Քուրթիս Ա.Մերեսիթ և Չարլզ Թեմփլ,Ուղեցույց1-7:

3.Ջ.Գյուլամիրյան ,փոքրածավալ խոսք կառուցելու կարողության ձևավորման մեթոդիկան տարրական դասարաններում<< Նախաշավիղ>> 2-6,2001:

4.Ա.Տեր-Գրիգորյան,Խոսքի զարգացման մեթոդիկա,Երևան 1974:

5.Գ.Հովհաննիսյան,Ա.Զոհրապյան,Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները,Երևան 2004: